ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՍԵՎԱԿ ՀԱՃԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ՝ 368-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԲՈՂՈՔԸ ԳՈՐԾԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ.... ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ 371-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ «ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔՈՒՄ ԱՌԿԱ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ....» ԴՐՈՒՅԹԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

(Քննության է ընդունվել Սահմանադրական դատարանի դատական կազմի 05.06.2019թ. ՍԴԴԿՈ-30 որոշմամբ)

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Սևակ Հաճի Հակոբյանի դիմումի հիման վրա՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխանաբար՝ 368-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «բողոքը գործին մասնակցող անձանց.... ուղարկելու մասին ապացույցները» բառակապակցության և 371-րդ հոդվածի 5-րդ մասի «Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները....» դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի դատաքննությունն սկսել 2019 թվականի հուլիսի 9-ին՝ ժամը 10.00-ին:

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի՝ գործով զեկուցող նշանակել Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Թունյանին:

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա՝ գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

10 հունիսի 2019 թվականի
ՍԴԱՈ-46